

ՄԱՀՈՒԱՆ ՏԵՍԻԼ

(Հատուած)

Մենք ափ ենք ելնում միասին եւ նայում ենք մեր շուրջը մի պահ.-

Լուսթիւն է, մռայլ մառախուղ, իսկ վերից գունատ մի մահիկ իր մեռեալ լոյսի հետ մէկտեղ տարածում է տխրութիւն ու ահ Այդ անծիր եզերքի վրայ անսահման Սոսկումի ու Մահի:

Քայլում ենք, իրարու բռնած, քայլերով տարտամ, երերուն, Անուղի, ինչպէս մոլորուած երկու կոյր, կամ անօգ մանուկ: Միեւնո՛յն մառախուղն է բռնել թէ՛ մօտիկը մեր, թէ՛ հեռուն, Միեւնո՛յն լուսթիւնն անհուն:

Խտանում էր մեր դէմ մառախուղը.- ժայռեր են կարծես ու քարեր

Պարսպի նման բարձրացել եւ բռնել ճանապարհն անդարձ:- Մօտենում ենք մենք ժայռերին - եւ տեսնում ենք վիթխարի ծառեր,

Եւ մտնում ենք ահա խաւարով ու ահով լեցուն մի անտառ:

Ծառերի միջով վիթխարի գնում ենք դանդաղ մենք առաջ, Կանգնում ենք, ահանջ ենք դնում լուսթեան մէջ երկար ու երկար,-

Եւ ահա հնչում է մթին անտառի խորքից մի հառաչ.-

Այդ ե՞րբ է արդեօք, հեկեկա՞նք, թէ՞ տրտունջ՝ քնարով երգած:-

Լսւում է ապա մօտիկից մի հանդարտ, դանդաղ ոտնաձայն.

Մօտենում է մէկը. դէպի մե՛զ, դէպի մե՛զ է գալիս ահա նա.

Եւ ահա - ծառերի ետեւից ելնում է մի այր զլխաբաց.-

Վարդապե՞տ է նա, մուրացի՞կ, թէ՞ գեղջուկ, աղքատ քահանայ:

Լուսնի սառ լոյսերով ողողուած՝ մօտենում է նա երերուն

Քայլերով, կանգնում է մեր դէմ,- ուրուական է կարծես նա ցաւի.-

Փռքիկ է. նիհար. կիսամերկ. ճակատին պսակ է կրում,

Եւ ձեռքին բռնած նա ունի մի հսկայ արծաթեայ տաւիղ:

Հասնում է մօրուքն սպիտակ մինչեւ սրունքները նրա՝

Սպիտակ սաւանի նման ծածկելով մերկութիւնը ծերի.

Հայեացքով տխուր ու անօգ նայում է նա լուռ մեր վրայ,

Եւ ապա, դառնալով Վարպետին, նա ասում է ձայնով մտերիմ.

«Վարպե՛տ, օ՛հ, ես է՛լ քեզ նման մի գիշեր աշխարհից անցայ,
 «Ապրեցի, իբրեւ վանական, հայրենի եզերքում քո ծովի»
 «Բայց չքնաղ հայրենիքը քո - ինձ համար հայրենիք չդարձաւ,
 «Եւ ծովը ձեր այն ծիծաղկուն - չբուժեց իմ սիրտը ցաւից»:

«Աշխարհում շաչող հողմերից այն կղզում ապաստան գտած,
 «Զգեցած սեւասեւ սքեմ՝ ես տաւիղը սակայն սիրեցի»
 «Եւ տաւիղը շեփոր դարձրած՝ քերթուժեան պարտէզը մտայ,
 «Որ կորած հայրենիքս երգեմ եւ անցեալը նրա հրածին»:-

«Երգեցի ես ձայնով առնական ամրոցներն ու բերդերը հայոց,
 «Ոստանները հայոց արքայից, պալատները նոցա փառահեղ»
 «Երգեցի Կարմիր Աւարայրը, Մասիսը՝ աստղերին հայող,
 «Զգտելով հին փառքը հայոց սրտերում անմար միշտ պահել»:

«Քնարով մարտի կոչեցի ես նոցա՝ յանուն անցեալի,
 «Կոչեցի ելնել վերստին, թօթափել փոշին բարբարոս»,-
 «Կոչեցի արժանի լինել մեր նախնեաց փառքին պանծալի՝
 «Վառելով ջահերն անցեալի, իբրեւ նո՛ր փրկութեան փարոս»:-

«Եւ երգս իզուր չհնչեց»:- Հայրենի եզերքից քո լուրթ
 «Թո՛չելով, իբրեւ հրաւէր, դէպի հայրենիքն իմ հեռու»-
 «Նա ոտքի հանեց քաջարի այրերի անմահ մի սերունդ,
 «Որ ելաւ գերութեան փոշուց հայրենեաց համար կռուելու»:-

«Եւ թէեւ քէնով բարբարոս փորձեցին նոքա, դարաւոր
 «Ոստիները հայոց աշխարհի, մեզ արեա՛մք ողողել կրկին»,-
 «Բայց վսեմ մեր երթը եղաւ անցեալի փայլո՛ւյ փառաւոր,
 «Եւ խաղա՛ղ սրտով ես մեռայ՝ մինչեւ մահ քնարը ձեռքիս»:-

Ասաց - եւ խփեց քնարին նա մոմէ մատներով դեղին,
 Աչքերում ամեհի մի հուր, մօրուքով մերկութիւնը ծածկած,-
 Եւ ձայնը նրա քնարի, որ նման էր ձայնին թիթեղի,
 Հնչում էր, ինչպէս մի հիւանդ, մահամբձ ընկած մանկան լաց»:

Եւ տաւիղն հնչելով հեռացաւ, խարխափով մտաւ նա նորից
 Անտառի խորքը խաւար, ուր տիրում էր տազնապ ու հառաչ»:-
 Մենք երկար լսեցինք նրա քնարի հառաչքը խորին,
 Մինչ սուղուեց, լոեց նա հեռում... Եւ անձայն անցանք մենք
 առաջ»:-